ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/256

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.05.2022թ. թիվ 26/26-1/9003-2022 գրությամբ «Սենտրալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 11.05.2022թ. Ե/40/1047-22 գրության հիման վրա, 18.05.2022թ. թիվ 26/26-1/9003-2022 գրությամբ նախաձեռնել է «Սենտրալ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Սենտրալ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ծանոթանալով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ/այսուհետ՝ Պատվիրատու/-ի կողմից նախաձեռնված ընթացակարգին, տեղեկացնում եմ, որ Պատվիրատուի աշխատակազմում բացակայում են որոշակի նեղ մասնագիտական գիտելիքներով մասնագետներ և այդ ամենը հենց արտացոլվում է Պատվիրատուի ծառայողական գրությամբ՝ որը վերաբերվում է նաև նախորդ գնման ընթացակարգին:

Պատվիրատուի հետ համագործակցող գործարանները ևս չեն կարողացել հստակ պատասխանել ուստի տվյալ ընթացակարգի մասով անորոշությունից դրդված մերժել են տարբեր հայտեր՝ առանց մասնագիտորեն հիմնավորելու՝ պատճառաբանվել են, «թև հրավերի պահանջներին չեն բավարարում»:

«Սենտրալ» ՍՊԸ-ն /այսուհետ՝ Մասնակից/ հանդիսանում ՀՀ-ում ռեզիդենտ պրոֆեսիոնալ անձնակազմով և խոշոր հարկ վճարով Ընկերություն, մասնագիտացված է առանցքակալների, ավտոպահեստամասերի և ավտոագրեգատների ոլորտում:

Մինչ ՀԱԷԿ-ՀՄԱԱՊՁԲ-5/22 ընթացակարգին մասնակցելը հրավերում ուսումնասիրվել են պահանջվող առանցքակալների տեխնիկական բնութագրերը.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի					
չ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր քանակը
1	44441200	Առանցքակալ	№ 32211 ԳՈՍ (ГОСТ) 8328 կամ համարժեքը:	*հատ*	*4*
2	44441200	Առանցքակալ	№ 46212 ԳՈՍ (ГОСТ) 831 կամ համարժեքը:	*հատ*	*4*
3	44441200	Առանցքակալ	№ 66322 ԳՈՍ (ГОСТ) 831 կամ համարժեքը:	*հատ*	*2*
4	44441200	Առանցքակալ	2320 ԳՕՍ(ГОСТ) 8328-75 կամ համարժեքը:	*հատ*	4
5	44441200	Առանցքակալ	46320Л ԳՕՍ(ГОСТ) 831-75 կամ(или) 7320 կամ համարժեքը:	*հատ*	6
6	44441200	Առանցքակալ	60202 ԳՕՍ(ГОСТ) 7242-81 կամ համարժեքը:	*հատ*	4
7	44441200	Առանցքակալ	FAG6026C3 կամ **համարժեքը**:	*հատ*	2
8	44441200	Առանցքակալ	NU1026-XL-M1-C3 կամ համարժեքը:	*հատ*	2
9	44441200	Առանցքակալ	32317 ԳՕՍ(ГОСТ) 8328-75 կամ համարժեքը:	*հատ*	4

7-րդ չափաբաժնով նախատեսված առանցքակալի տեխնիկական բնութագրի մասնագիտական մեկնաբանություն.

FAG եվրոպական արտադող գործարանի անվանումն է և չի համդիսանում առանցքակալի տեխնիկական բնութագրի որևէ բնութագրիչ մաս

6026 առանցքակալի միջազգային համարն է, որով բնութագրվում է առանցքակալի լիարժեք տեխնիկական հատկանիշները՝ չափսերը, ձևը, տիպը, քաշը, նյութը …

C3-ը օգտագործվող յուղի տեսակն է

Ծանոթություն.

Առանցքակալների առք ու վաճառքը իրականացվում է միջազգային համարի հիման վրա:

Եթե հրավերի տեխնիկական բնութագրում 7-րդ չափաբաժնում բացակայեր «համարժեք» տերմինը, ապա կառաջարկվեր միմիայն FAG եվրոպական արտադող գործարանի 6026C3 / FAG6026C3/ առանցքակալ:

«Համարժեք» դրանք այն առանցքակալներն են, որոնք տեխնիկական բնութագրերով չեն տարբերվում, տարբեր են լինում միայն արտադրող գործարանները, որոնցից մեկն ել ռուսական ԳՊԶ-ն է:

Մասնակցի կողմից 4 մայիսի 2022թ-ին ներկայացված հավելված 1.1 –ով առաջարկված առանցքակալի միջազգային համարը՝ 6026 է, ինչը հենց պահանջված է եղել հրավերով:

Առաջարկվող ԳՊԶ գործարանի առանցքակալում C3 տիպի յուղ է օգտագործվում և փաստացի առանցքակալի վրա չի մակնիշավորվում, սակայն արտացոլված է լինում առանցքակալի տեխնիկական անձնագրում:

Քանի որ հրավերով չի պահանջվել արտադրողի մասին տեղեկատվություն հետևաբար չի էլ ներկայացվել արտադրող գործարանի անվանումը:

Կից ներկայացվում է.

1 և 2 կետերի բացատրությունները՝ ինտերնետ հարթակից

FAG եվրոպական արտադող գործարանի մասին տեղեկատվություն՝ որով հիմնավորվում է, որ

F A G տառերի հաջորդականությունը 6026 առանցքակալի տեխնիկան բնութագրի հետ առնչություն չունի:

Հիմք ընդունելով, որ առանցքակալի արտադրող գործարանի անվանումը Պատվիրատուն չի տարբերում իրեն անհրաժեշտ առանցքակալի տեխնիկական բնութագիրը սահմանող միջազգային համարից, ուստի գտնում ենք, որ նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2022/256 վարույթը ենթակա է մերժման»:

«Սենտրալ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/256 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022թ. ժամը 11:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 11.05.2022թ. Ե/40/1047-22 գրությամբ, հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ՀՄԱՊՁԲ-5/22» ծածկագրով գնման ընթացակարգի ամփոփման, հայտերի գնահատման նիստում արձանագրվել է, որ «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ապրանքների տեխնիկական բնութագրերը լրացված չեն: ՀՀ Կառավարության 526-Ն Որոշման 41-րդ կետի համաձայն' գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է և համակարգող քարտուղարը ծանուցել է մասնակցին առկա անհամապատասխանությունների վերաբերյալ՝ առաջարկելով կատարել շտկում: Սահմանված ժամկետում «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից շտկումը կատարվել է, սակայն N 7 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը գնահատվել է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ անբավարար և մերժվել է:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա. պարբերության և ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն Որոշման 45-րդ կետի պահանջներով՝ Ձեզ ենք ներկայացնում մասնակցի տվյալները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/256 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022թ. ժամը 11:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/256 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/256 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ՀՄԱԱՊՁԲ-5/22» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «Սենտրալ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետի դրույթները, որոշել է կասեցնել հայտերի գնահատման նիստը և «Սենտրալ» ՍՊԸ-ին առաջարկել շտկել անհամապատասխանությունը: Նույն օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանն առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ, հաշվի առնելով, որ «Սենտրալ» ՍՊԸ-ն կատարել են շտկումները, որոշում է կայացրել վերջինիս հայտը գնահատել հրավերի պահանջներին համապատասխան՝ բավարար:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, որոշել է 7-րդ չափաբաժնով ընթացակարգը հայտարարել չկայացած:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Gegham.Yeritsyan@anpp.am էլ. փոստի միջոցով ծանուցում է ուղարկել Ընկերության central.llc@yandex.com էլ. փոստի հասցեին և հայտնել հետևյալը.

««ՀԱԷԿ-ՀՄԱԱՊՁԲ-5/22» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում Ձեր կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ Հավելված 1.1-ում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը լրացված չեն, որից պարզ չէ թե ինչ ապրանք է առաջարկվում: Անհրաժեշտ է լրացնել հավելված 1.1-ը ամբողջությամբ: Ինչպես նաև հաստատել էլ. ստորագրությամբ:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն Որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետի՝ գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել հայտերի գնահատման նիստը և առաջարկել Ձեզ մեկ աշխատանքային օրվա (02.05.2022թ.-ի մինչև ժամը 23:59-ը) ընթացքում շտկել անհամապատասխանությունը»:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.05.2022թ. թիվ 26/26-1/9003-2022 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 11.05.2022թ. Ε/40/1047-22 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

<u>Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի</u>

<u>հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար առանցքակալների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ՀՄԱՊՁԲ-5/22» ծածկագրով գնման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Սենտրալ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետի դրույթները, որոշել է կասեցնել հայտերի գնահատման նիստը և «Սենտրալ» ՍՊԸ-ին առաջարկել շտկել անհամապատասխանությունը: Նույն օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանն առկա անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ, հաշվի առնելով, որ «Սենտրալ» ՍՊԸ-ն կատարել են շտկումները, որոշում է կայացրել վերջինիս հայտը գնահատել հրավերի պահանջներին համապատասխան՝ բավարար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, որոշել է 7-րդ չափաբաժնով ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Gegham.Yeritsyan@anpp.am էլ. փոստի միջոցով ծանուցում է ուղարկել Ընկերության central.llc@yandex.com էլ. փոստի հասցեին և հայտնել հետևյալը.

««ՀԱԷԿ-ՀՄԱՊՁԲ-5/22» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում Ձեր կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ Հավելված 1.1-ում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը լրացված չեն, որից պարզ չէ թե ինչ ապրանք է առաջարկվում: Անհրաժեշտ է լրացնել հավելված 1.1-ը ամբողջությամբ: Ինչպես նաև հաստատել էլ. ստորագրությամբ:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N 526-Ն Որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետի՝ գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել հայտերի գնահատման նիստը և առաջարկել Ձեզ մեկ աշխատանքային օրվա (02.05.2022թ.-ի մինչև ժամը 23:59-ը) ընթացքում շտկել անհամապատասխանությունը»:

Այսպիսով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով <u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերը, մասնավորապես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2022թ. նիստի թիվ 2 արձանագրությունը, հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն առանց Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան «Սենտրալ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ որոշում կայացնելու, 11.05.2022թ. Ε/40/1047-22 գրությամբ Ընկերության տվյալները՝ համապատասխան փաստաթղթերով, ներկայացրել է լիազորված մարմնին՝

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, գրությամբ հայտնելով, որ սահմանված ժամկետում «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից շտկումը կատարվել է, սակայն 7-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը գնահատվել է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ անբավարար և մերժվել է, ***այն պայմաններում, երբ թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ սահմանված ժամկետում «Սենտրալ» ՍՊԸ-ն կատարել է շտկումները, որի արդյունքում վերջինիս հայտը գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխան՝ բավարար***:

Վերոնշված արձանագրությամբ Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով միայն արձանագրվել է չկայացած հայտարարելը և նշվել հիմնավորում:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Սենտրալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.05.2022թ. թիվ 26/26-1/9003-2022 գրությամբ «Սենտրալ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**